պսակին՝ ինքնակալել սկսաւ յամի Տեառըն ՌՄՂԲ. Թագաւորեաց Եղամանաց զամս Օ.: Յաւուրս սորա Աշրաֆ Սուլթանն Եգիպտոսի եառ զՀռոմկլայն, որ էր Կաթուղիկոս Տէր Ստեփաննոս մականուն Հռոմայեցի: Եւ զԼ. Ռ. ոգի և զԿաթուղիկոսն տարաւ գերի 'ի Մըսր՝ 'ի բանտ և 'ի ծառայութիւն. և եկաւ մահ յաշխարհն իւր: Իսկ Սուլթանն զաջ սրբոյ Լուսաւորչին և զայլ սրբութիւնսն տուեալ 'ի նա՝ և պատուաւոր արս ԽԲ. զոր և կամեցաւ Կաթուղիկոսն, և ուղարկեաց զնա յաթոռն իւր 'ի թուին Հայոց ՉԽԷ. յաւուրս թագաւորին Հեթմոյ՝ որ վասն Ծռազատկին ասաց զոտանաւորն, Որ ծառայեալս եմ բիւր ախտից: Եւ Լ. Ռ. անձինք մնացին յԵգիպտոս՝ մինչև սպառեցին: Եառ սա և զԵրուսաղէմ և զԱ.քա և զամենայն ծովեզերեայսն, և ջնջեաց զքրիստոնէութիւնն յայն աշխարհէն:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան